ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 ապրիլի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

48
(3257)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ո՞Վ Է ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթը իրականացրել է ուսումնասիրություն՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի 35-րդ համարում ընդգրկված, «Ուրախ ավտոբուսի» ներկայացուցիչ Արաքսյա Վարդանյանի վերաբերյալ: Պարզվեց, որ Արաքսյա Վարդանյանը հանդես է գալիս որպես Փարաքար համայնքի ավագանու անդամ եւ ՔՊ կուսակցության ակտիվ ներկայացուցիչ: Հատկանշական է, որ երկարատեւ որոնումների արդյունքում նրա մասնագիտական կենսագրության վերաբերյալ բաց աղբյուրներում գրեթե տվյալներ չկան:

«Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությամբ՝ միայն պաշտոնական հայտարարագրերն են հնարավորություն տալիս պատկերացում կազմել նրա աշխատանքային գործունեության եւ եկամուտների մասին: Հայտարարագրերում նշված են նրա աշխատատեղերը՝

- «Զորակ» շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն
- «Ավելիաց» կազմակերպություն

Ըստ 2024 թվականի տարեկան հայտարարագրի՝ Արաքսյա Վարդանյանի գույքն ու եկամուտները.

- Անշարժ գույք՝ բնակելի տուն Փարաքարում (համատեղ սեփականություն, 2013թ.),
- Հողամաս Փարաքարում (2019թ.),
- 2024-ին ձեռք բերված անավարտ շինություն Երեւանում՝ 27,060,000 դրամ,
- Տրանսպորտային միջոց՝ HONDA (2018, ձեռքբերում՝ 01/07/2023),
- Թանկարժեք զարդ՝ 15,000,000 դրամ արժեքով,
- Բանկային հաշիվների մնացորդ՝ 2,645,320 դրամ,
- Կանխիկ միջոցներ՝ 1,000,000 դրամ,
- Վարկային պարտավորություն՝ 23,000,000 դրամ (բնակարան):

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի կողմից ուսումնասիրված պաշտոնական փաստաթուղթը նոր հարցեր է առաջացնում առողջապահական ոլորտում ֆինանսական թափանցիկության վերաբերյալ: Խոսքը վերաբերում է ՀՀ առողջապահության նախարարության եւ «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջեւ կնքված դրամաշնորհի հատկացման պայմանագրին, որի շրջանակում կենտրոնին տրամադրվել է մինչեւ 25 միլիոն դրամ պետական աջակցություն: Փաստաթղթից պարզ է դառնում, որ գումարը հատկացվել է ՀՀ պետական բյուջեից: Պայմանագրով հստակ նշվում է, որ իրականացվելիք միջոցառումները պետք է ներկայացված լինեն հավելվածներում, մասնավորապես՝ «Ծրագրի միջոցառման» եւ «աշխատանքային պլանի կատարողական հաշվետվության» տեսքով: Սակայն փաստաթղթին կից չեն ներկայացվել ո՛չ միջոցառումների մանրամասները, ո՛չ էլ հաշվետվական որեւէ տվյալ: Այսինքն՝ հանրությունը զրկված է տեղեկանալու հնարավորությունից, թե կոնկրետ ինչ նպատակներով է ծախսվելու այդ 25 միլիոն դրամը եւ ինչ արդյունքներ են ակնկալվում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Պաշտոնական աղբյուրներից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Միացյալ քրիստոնյա Հայաստան» կուսակցությունը չի ներկայացրել 2025 թվականի իր ֆինանսական հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, ինչը համարվում է վարչական իրավախախտում եւ ենթակա է պատասխանատվության: Հանձնաժողովի ուսումնասիրությամբ արձանագրվել է խախտումը, սակայն այն որակվել է որպես նվազ նշանակության: Արդյունքում, խիստ պատժամիջոցների փոխարեն կիրառվել է առավել մեղմ մոտեցում. կուսակցության խորհրդի նախագահ Տիգրան Միշայի Հովհաննիսյանի նկատմամբ հայտարարվել է բանավոր նկատողություն: Այս որոշումը հարցեր է առաջացնում քաղաքական դաշտում հաշվետվողականության եւ պատասխանատվության կիրառման համաչափության վերաբերյալ: Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը քաղաքական ուժերի գործունեության թափանցիկության հիմնական գործիքներից է, եւ դրա չկատարումը, նույնիսկ եթե գնահատվում է որպես «նվազ նշանակության», կարող է ստեղծել վտանգավոր նախադեպ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Թեեւ ՔՊ իշխանությունը օրուգիշեր պայքար է մղում Ռուսաստանի Դաշնության դեմ՝ մեղադրելով Կրեմլին հիբրիդային հարձակումների մեջ, ամեն դեպքում, ՀՀ-ն շարունակում է սերտ հարաբերությունները ՌԴ-ի հետ պահպանել: «Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ուսումնասիրել ՀՀ Կառավարության ծրագրի (2021-26) 2025թ. կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցը, եւ պարզվեց, որ ԱՄՆ-ի հետ ունենք հարաբերությունների որակական բարձրացում, ՌԴ-ի հետ՝ ծավալ ու ինտենսիվ կապեր: 2025 թվականի պաշտոնական զեկույցի տվյալները ցույց են տալիս երկակի պատկեր. Հայաստանի հարաբերությունները ԱՄՆ-ի հետ ակնհայտորեն ստացել են նոր քաղաքական որակ, մինչդեռ Ռուսաստանի հետ կապերը, նույնիսկ անկման պայմաններում, շարունակում են մնալ անհամեմատ ավելի խորը՝ թե՛ շփումների ինտենսիվությամբ, թե՛ տնտեսական ծավալով: Այսինքն՝ եթե խոսքը քաղաքական վերաձեւակերպման մասին է, առաջընթացը ամերիկյան ուղղությամբ է, իսկ եթե չափանիշը գործնական կապերի ծավալն է, ռուսական ուղղությունը դեռ գերակշռում է:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ»

ArmLur.am-ը զրուցել է «Հայկական խորհուրդ» վերլուծական կենտրոնի ասոցացված փորձագետ Նարեկ Մինասյանի հետ:

- Պարոն Մինասյան, ապրիլի 10-12-ը գտնվում էիք Ադրբեջանում: Ի՞նչ զգացողություններով վերադարձաք այդ այցից:

- Այցը բավական հետաքրքիր եւ միաժամանակ կարեւոր փորձ էր: Տարիներ շարունակ այս խնդիրներով զբաղվող մասնագետների համար հնարավորություն ստեղծվեց ներսից տեսնելու Ադրբեջանը՝ նրանց ենթակառուցվածքները, աշխատանքային միջավայրը, ինչպես նաեւ անմիջական շփումներ ունենալ ադրբեջանցի գործընկերների հետ: Անկեղծ ասած, զգացողությունները խառն էին՝ մի կողմից՝ լարվածություն եւ զգուշություն, մյուս կողմից՝ հետաքրքրություն եւ որոշակի հույս, որ նման շփումները կարող են նպաստել փոխըմբռնման ձեւավորմանը:

- Ի՞նչ հիմնական հարցեր են քննարկվել հանդիպումների ընթացքում:

- Քննարկումները բավական լայն շրջանակ են ընդգրկել: Անդրադարձել ենք խաղաղության գործընթացին՝ հասկանալու համար, թե որտեղ ենք հիմա, ինչ հնարավորություններ եւ մարտահրավերներ կան: Քննարկվել են նաեւ տարածաշրջանային զարգացումները՝ հատկապես Ուկրաինական պատերազմի եւ Իրանի շուրջ տեղի ունեցող գործընթացների ազդեցությունը մեր տարածաշրջանի վրա: Այս ամենը դիտարկվել է նաեւ այն տեսանկյունից, թե ինչ նոր ռիսկեր եւ հնարավորություններ կարող են առաջանալ Հարավային Կովկասի համար:

- Արդյո՞ք քննարկումների ընթացքում նկատելի էր ընդհանուր մոտեցումների առկայություն:

- Հետաքրքիր էր այն հանգամանքը, որ ադրբեջանական կողմում եւս հնչում էր միտքը, թե Հայաստանը եւ Ադրբեջանը որոշ առումներով գտնվում են «նույն նավակում»՝ անվտանգության մարտահրավերների տեսանկյունից: Ընդգծվում էր, որ հարաբերական կայունությունը, որքան էլ փխրուն լինի, որոշակի իմունիտետ է ստեղծում եւ նվազեցնում է լայնամասշտաբ էսկալացիայի ռիսկը: Սա նաեւ կարեւոր է՝ թույլ չտալու համար, որ երրորդ երկրները միջամտեն եւ ապակայունացնեն իրավիճակը:

- Ձեր կարծիքով՝ որքանո՞վ է իրատեսական մոտ ապագայում խաղաղության հաստատումը:

- Պետք է իրատես լինել. լիարժեք եւ անշրջելի խաղաղություն դեռեւս չկա, եւ դրա հասնելը ժամանակատար գործընթաց է: Սակայն «նեղ խաղաղության» հասնելը՝ այսինքն՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատում, որոշակի տնտեսական եւ առեւտրային համագործակցություն, լիովին հնարավոր է: Սա չի նշանակում, որ կողմերը միանգամից դառնում են բարեկամներ. հաշվի առնելով պատմական ծանր ժառանգությունը՝ այդ փուլը շատ ավելի երկար ճանապարհ է պահանջելու:

- Բայց երբ կողմերի դիրքորոշումները հաճախ չեն համընկնում, ինչպե՞ս կարելի է առաջ շարժվել:

- Իրականում մենք այդ հարցերը նույնպես բարձրաձայնել ենք: Կա ընկալում, որ պետք է կենտրոնանալ դրական օրակարգի վրա եւ գտնել այն ոլորտները, որտեղ հնարավոր է համագործակցություն: Միեւնույն ժամանակ բոլորը գիտակցում են, որ եթե ոչինչ չարվի, խնդիրները ոչ միայն չեն լուծվի, այլ նաեւ կարող են խորանալ:

- Քննարկումների արդյունքները ներկայացվելո՞ւ են իշխանություններին:

- Այո, անպայման: Այս ձեւաչափը՝ «Track 1.5»-ը, հնարավորություն է տալիս գեներացնել նոր գաղափարներ եւ փոխանցել դրանք որոշում կայացնողներին: Մենք պատրաստում ենք առաջարկություններ, որոնք կարող են օգտագործվել բանակցային գործընթացում: Կարեւոր է նաեւ նշել, որ փորձագետներն ավելի մեծ ճկունություն ունեն, քան պաշտոնյաները, եւ դա թույլ է տալիս ավելի ազատ ու ստեղծարար մոտեցումներ առաջարկել:

- Սահման անցման գործընթացը նույնպես քննարկվե՞լ է:

- Այո, եւ դա շատ կարեւոր բաղադրիչ էր: Սահմանազատված հատվածով փոխադարձ այցելությունները հստակ ուղերձ են, որ երկու երկրներն ընդունում են միմյանց սահմանների գոյությունը: Օրինակ՝ ադրբեջանական պատվիրակությունը Հայաստան գալու ժամանակ անցել է բոլոր սահմանային ընթացակարգերը՝ ինչպես նախատեսված է Հայաստանի օրենսդրությամբ: Սա խորհրդանշական, բայց կարեւոր քայլ է վստահության ձեւավորման տեսանկյունից:

- Արդյո՞ք նման հանդիպումները շարունակական կլինեն:

- Այո, նախատեսվում է շարունակականություն ապահովել: Միեւնույն ժամանակ քննարկվում է ձեւաչափի զարգացումը՝ ավելի նեղ մասնագիտական հանդիպումների միջոցով: Օրինակ՝ առանձին քննարկումներ տրանսպորտի, շրջակա միջավայրի կամ բիզնեսի ոլորտների մասնագետների միջեւ:

- Տնտեսական համագործակցության ուղղությամբ ի՞նչ հեռանկարներ կան:

-Հետաքրքիր էր, որ ադրբեջանական կողմից հնչում էր նաեւ հայկական ապրանքների ներմուծման հետաքրքրվածություն: Սա կարող է նշանակել, որ կա որոշակի քաղաքական կամք տնտեսական կապերի զարգացման համար: Իհարկե, թե կոնկրետ ինչ ապրանքների մասին է խոսքը, դեռ պետք է հստակեցվի մասնագիտական մակարդակում, բայց ընդհանուր առմամբ երկկողմ առեւտրի հնարավորությունը բավական իրատեսական է:

- Վերջում՝ ինչպե՞ս կգնահատեք այս գործընթացի ընդհանուր հեռանկարը:

- Երաշխիքներ, ցավոք, չկան: Բայց մի բան պարզ է՝ եթե որեւէ քայլ չարվի, իրավիճակը չի բարելավվի: Իսկ նման հանդիպումները, թեկուզ փոքր քայլերով, հնարավորություն են ստեղծում առաջ շարժվելու եւ նվազագույնը՝ կայունությունը պահպանելու ուղղությամբ:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԿԱՅԱՑԵԼ Է ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Միջխորհրդարանական միության 152-րդ վեհաժողովի շրջանակում ապրիլի 17-ին Ստամբուլում կայացել է Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդարանների նախագահների երկկողմ հանդիպումը:

Հանդիպման ընթացքում գոհունակությամբ արձանագրվել են երկու երկրների միջեւ հարաբերությունների կարգավորման շրջանակներում վերջին գործընթացները՝ ներառյալ խաղաղության եւ կայունության ամրապնդմանն ուղղված քայլերը, ինչպես նաեւ առեւտրային կապերի հաստատումն ու ընդլայնումը:

Ընդգծվել է Միջխորհրդարանական միության դերը՝ որպես միջխորհրդարանական համագործակցության կարեւոր հարթակ: Այս համատեքստում կողմերը բարձր են գնահատել ու երախտագիտություն հայտնել Միջխորհրդարանական միության գլխավոր քարտուղար Մարտին Չունգոնգին՝ Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդարանների նախագահների միջեւ երկխոսության ձեւավորման ուղղությամբ նրա անձնական ջանքերի համար: Խորհրդարանների նախագահները դրական են գնահատել միջազգային կազմակերպությունների շրջանակներում խորհրդարանական պատվիրակությունների միջեւ շփումները, որոնք սկսվել են 2025 թվականի հոկտեմբերին Ժնեւում կայացած նրանց հանդիպումից հետո, եւ պայմանավորվել են շարունակել այդ շփումները:

Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդարանների նախագահներն ընդգծել են կառուցողական խորհրդարանական երկխոսության շարունակման կարեւորությունը՝ երկու հասարակությունների միջեւ վստահության հետագա ամրապնդման համար:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Միջխորհրդարանական միության (IPU) 152-րդ վեհաժողովի լիագումար նիստի աշխատանքներին մասնակցելու նպատակով աշխատանքային այցով Ստամբուլում գտնվող ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հանդիպում է ունեցել Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիի հետ: Զրուցակիցները քննարկել են միջխորհրդարանական համագործակցությանը վերաբերող հարցերի լայն շրջանակ: Անդրադարձ է կատարվել ինչպես տարածաշրջանային զարգացումներին վերաբերող հարցերին, այնպես էլ երկկողմ հետաքրքրության այլ թեմաներին:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՏԱԿ

ԱԺ «Պատիվ ունեմ» դաշինքի պատգամավոր, Արցախի Հանրապետության նախագահի նախկին խորհրդական Տիգրան Աբրահամյանի ֆեյսբուքյան գրառումը. «2023 թվականին Արցախի դեմ իրականացված ադրբեջանական հարձակման ժամանակ դիտորդի դեր ստանձնած եւ Արցախն Ադրբեջան հռչակած իշխանությունը խոսում է Արցախի ներքին պրոցեսների կամ կռվելչկռվելու մասին: Ավելին, այսօր ԱԺ փոխխոսնակն ավելի առաջ գնաց, ասում է՝ մեր հաստատած խաղաղությունից հետո սահմանին մարդիկ չեն սպանվում, իսկ նախկինում՝ ամեն տարի, տասնյակներով սպանվում էին: Իրենց պաշտոնավարման 8 տարիների ընթացքում Հայաստանի ու Արցախի դեմ 6-7 պատերազմ, ագրեսիա է արձանագրվել՝ իրենց իսկ արկածախնդիր քաղաքական կուրսի պատճառով, որի հետեւանքը մեր հայրենիքի տարբեր հատվածների օկուպացիան է եւ հազարավոր մարդկանց նահատակությունը: Իսկ այս անձինք դեռ խոսում են նախորդ տարիների կորուստների կամ դրա թվի մասին: Մի բան էլ. այս պահին սահմանին դեպքեր չեն արձանագրվում, որովհետեւ ամբողջությամբ ընդունել եք ադրբեջանական օրակարգը եւ շարժվում եք դրանց իրացման ճանապարհով, իսկ հիմա էլ մեծ թվով մարդիկ բանակում մահանում են խաղաղ պայմաններում, որովհետեւ բանակի բարեփոխումների անվան տակ գնացել եք դրա բարոյալքման եւ կազմաքանդման ճանապարհով»:

ՉԻՆԱՍՏԱՆԸ՝ ԱՌԱՔԱՏԱՐ

Չինաստանում ատոմակայանների (ԱԷԿ) ընդհանուր տեղադրված հզորությունը հասել է 125 միլիոն կՎտ-ի, ինչը երկիրը դարձրել է աշխարհի ամենամեծ ատոմակայան ունեցողը (ԱԷԿ): Այս մասին նշված է Չինաստանի ատոմային էներգիայի ասոցիացիայի կողմից հրապարակված «Չինաստանի ատոմային էներգիայի զարգացման զեկույց 2026» (Կապույտ գիրք) զեկույցում: Փաստաթղթի համաձայն՝ Չինաստանում առեւտրային շահագործման մեջ է 60 ԱԷԿ բլոկ: Կառուցման փուլում է եւս 36 բլոկ, որը կազմում է կառուցվող միջուկային ռեակտորների համաշխարհային ընդհանուր թվի կեսից ավելին: Ավելին, 16 բլոկ ստացել է կառավարության հաստատումը եւ սպասում է կառուցմանը: Զեկույցում նշվում է, որ Չինաստանն արդեն սկսել է երկու նոր ԱԷԿ բլոկների շինարարությունը 2026 թ. եւ նախատեսում է մինչեւ տարեվերջ շահագործման հանձնել յոթ բլոկ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՈՂՋՈՒՆԵԼ Է

Իրանը ողջունել է Լիբանանում հրադադարի հայտարարությունը՝ ընդգծելով անհրաժեշտությունը իսրայելական ուժերի լիակատար դուրսբերման՝ հարավային Լիբանանի օկուպացված տարածքներից, բոլոր բանտարկյալների ազատ արձակման եւ տեղահանված բնակիչների վերադարձի իրենց տները: Այս մասին հայտարարել է Իրանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Էսմայիլ Բաղային՝ նշելով, որ ռազմական գործողությունների դադարեցումը մաս է կազմում Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ ձեռք բերված հրադադարի համաձայնության, որը միջնորդվել է Պակիստանի կողմից: Նրա խոսքով՝ Իրանը բանակցությունների սկզբից, այդ թվում՝ Իսլամաբադում անցկացված քննարկումների ընթացքում, ընդգծել է տարածաշրջանային համապարփակ հրադադարի անհրաժեշտությունը՝ ներառյալ Լիբանանը, եւ շարունակել է այդ ուղղությամբ աշխատանքները նաեւ հետագա փուլերում: Իրանի ԱԳՆ խոսնակը նաեւ բարձր է գնահատել Լիբանանի «դիմադրության ուժերի» պայքարը՝Իսրայելի գործողությունների դեմ, եւ շնորհակալություն է հայտնել Պակիստանին միջնորդական ջանքերի համար, որոնք, ըստ նրա, նպաստել են 10-օրյա հրադադարի հաստատմանը: Բաղային իր ցավակցությունն է հայտնել Լիբանանի դիմադրության զոհերի ընտանիքներին եւ համերաշխություն է հայտնել Լիբանանի ժողովրդին ու կառավարությանը: Նա նաեւ շեշտել է օկուպացված տարածքներից Իսրայելի լիակատար դուրսբերման, բոլոր բանտարկյալների ազատման, տեղահանվածների վերադարձի եւ Լիբանանի ավերված ենթակառուցվածքների վերականգնման անհրաժեշտությունը՝ իհարկե միջազգային հանրության աջակցությամբ:

Ա. Վ.

ՉԻ ՕԳՆԻ

ԱՄՆ վարչապետ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ ԱՄՆ-ը անհրաժեշտության դեպքում չի օգնության հասնի Իտալիային: Նա այս մասին հայտարարություն է հրապարակել ապրիլի 16-ին Truth Social-ում: «Իտալիան մեզ օգնության չի հասել, եւ մենք նրանց օգնության չենք հասնի», - գրել է ամերիկացի առաջնորդը: Նա հայտարարությանը կից ներկայացրել է The Guardian-ում մարտի 31-ի հոդվածի հղումը, որտեղ հաղորդվում էր, որ Իտալիան ԱՄՆ-ին մերժել է մուտք գործել Սիցիլիայի Սիգոնելլա ռազմաբազա: Ինչպես ավելի վաղ հաղորդել էր իտալական Corriere della Sera թերթը, մերժումը տեղի է ունեցել մարտի 27-ին: Այն պնդում էր, որ Իտալիայի ռազմական ղեկավարության հետ խորհրդակցություններ չեն անցկացվել, եւ պլանը, որը նախատեսում էր ռմբակոծիչների վայրէջք Սիգոնելլա բազայում՝ նախքան Մերձավոր Արեւելք շարունակելը, ուղարկվել է իտալական իշխանություններին այն բանից հետո, երբ ամերիկյան ինքնաթիռներն արդեն թռիչք էին իրականացրել: Ինչպես ավելի ուշ նշել էր Իտալիայի վարչապետ Ջորջիա Մելոնին, Հռոմի եւ Վաշինգտոնի միջեւ որեւէ լարվածություն չկա Սիցիլիա կղզում գտնվող բազա մուտք գործելու մերժման վերաբերյալ լրատվամիջոցների հաղորդագրությունների հետ կապված, որոնք թույլ չեն տվել ամերիկյան ռմբակոծիչներին մուտք գործել Մերձավոր Արեւելքի մարտական գոտի:

ԻՆՉ Է ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ

ՆՈՐ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ArmLur.am-ի ուսումնասիրությամբ՝ e-draft հարթակում հանրային քննարկման է դրվել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է հաստատել «Գործազուրկ անձանց թվային գրագիտության զարգացման ծրագիրը»:

Նախագծի հանրային քննարկումը տեւելու է 2026 թվականի ապրիլի 16-ից մինչեւ մայիսի 4-ը:

Ծրագրի նպատակն է գործազուրկ քաղաքացիների համար ապահովել թվային գրագիտության նվազագույն մակարդակ՝ բարձրացնելով նրանց մրցունակությունը աշխատաշուկայում եւ զարգացնելով համակարգչային ու հաղորդակցական հմտությունները՝ ՏՀՏ գործիքների կիրառմամբ:

Նախատեսվում է 24 ակադեմիական ժամ տեւողությամբ դասընթաց՝ 6 շաբաթ տեւողությամբ, շաբաթական 2 օր, օրական 2 ժամ ձեւաչափով՝ հիբրիդ (առկա եւ առցանց) ուսուցմամբ: Դասընթացները ներառում են համակարգչային տարրական հմտություններ, էլեկտրոնային փոստի կիրառում, CV կազմել, աշխատանքի որոնման առցանց հարթակների օգտագործում, ինչպես նաեւ կիբերանվտանգության եւ թվային էթիկայի հիմունքներ:

Դասընթացի ավարտին 80 տոկոս եւ ավելի արդյունք ապահոված մասնակիցները կստանան վկայական եւ 50,000 դրամի չափով վաուչեր, որը հնարավոր կլինի օգտագործել ոչ ֆորմալ կրթական ծրագրերում: Առաջին փուլում նախատեսվում է ներգրավել մինչեւ 10,000 գործազուրկ անձ: Ծրագրի ընդհանուր բյուջեն գնահատվում է շուրջ 492.8 մլն դրամ:

Նախագծի հեղինակների գնահատմամբ՝ ծրագիրը կնպաստի գործազրկության նվազեցմանը, աշխատաշուկայի թվայնացմանը եւ քաղաքացիների զբաղվածության հնարավորությունների ընդլայնմանը: Ծրագիրը նախատեսվում է ուժի մեջ մտցնել 2027 թվականի հունվարի 1-ից:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՈՉ Է ԱՐԵԼ

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը ողջունում է Լիբանանի եւ Իսրայելի միջեւ հրադադարի հաստատումը եւ կոչ է անում բոլոր կողմերին հարգել դրա բոլոր դրույթները, ասվում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի խոսնակ Ստեֆան Դյուժարիկի հայտարարության մեջ:

«Գլխավոր քարտուղարը ողջունում է Իսրայելի եւ Լիբանանի միջեւ 10-օրյա հրադադարի մասին հայտարարությունը եւ բարձր է գնահատում Միավորված ազգերի կազմակերպության դերը հրադադարի հաստատմանը նպաստելու գործում: Գլխավոր քարտուղարը հույս ունի, որ այս հրադադարը կհարթի բանակցությունների եւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1701 բանաձեւի լիարժեք իրականացման ճանապարհը, որն ուղղված է հակամարտության երկարատեւ լուծմանը: Նա կոչ է անում բոլոր կողմերին լիովին հարգել հրադադարը եւ կատարել միջազգային իրավունքի, այդ թվում՝ միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում իրենց պարտավորությունները», - ասվում է հայտարարության մեջ:

Գուտերեշը ընդգծել է, որ ՄԱԿ-ը աջակցում է «ռազմական գործողությունները դադարեցնելու եւ Կապույտ գծի (Լիբանանի եւ Իսրայելի միջեւ սահման, որն անվանվել է խաղաղապահների սաղավարտների գույնի՝ ՏԱՍՍ) երկու կողմերում բնակչության տառապանքները մեղմելու բոլոր ջանքերին»:

Գլոբալ կազմակերպության ղեկավարը նաեւ հույս է հայտնել, որ այս համաձայնագիրը կնպաստի Մերձավոր Արեւելքում «երկարաժամկետ եւ համապարփակ խաղաղության» հասնելուն:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՆ

Ապրիլի 17-ին Փարիզում Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան համանախագահում են շուրջ 40 երկրների հանդիպում՝ նպատակ ունենալով ցույց տալ ԱՄՆ-ին, որ նրա դաշնակիցներից մի քանիսը պատրաստ են մասնակցել Հորմուզի նեղուցում նավարկության ազատության վերականգնմանը, երբ պայմանները թույլ տան:

Իրանը փետրվարի 28-ից սկսված ԱՄՆ-իսրայելական հարվածներից հետո հիմնականում փակել է նեղուցը օտար նավերի համար, իսկ Վաշինգտոնը սահմանափակումներ է կիրառել իրանական նավահանգիստներ մտնող եւ դուրս եկող նավերի նկատմամբ:

Չնայած ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կոչերին՝ միանալ շրջափակմանը, եվրոպական երկրները նշել են, որ դա կնշանակի պատերազմի մեջ մտնել: Սակայն նրանք պատրաստակամություն են հայտնել ապագայում աջակցել նեղուցի բաց պահմանը՝ հրադադարի կամ հակամարտության ավարտից հետո:

Հանդիպմանը կքննարկվեն նաեւ միջազգային իրավունքի պահպանումը, ծովային փոխադրումների տնտեսական խնդիրները եւ ավելի քան 20,000 նավաստիների անվտանգությունը:

Բացի այդ, կքննարկվի պայմանների առկայության դեպքում բազմազգ պաշտպանական առաքելության հնարավոր տեղակայումը՝ նավարկության ազատությունն ապահովելու համար: Այս մասին հայտնում է REUTERS-ը:

ՇՐՋԱՓԱԿՎԱԾ ԵՆ

Մոտ 2000 նավ՝ 20,000 նավաստիներով, արգելափակված է Պարսից ծոցում՝ Իրանի դեմ ԱՄՆ-Իսրայելի պատերազմի պատճառով, հայտարարել է Միջազգային ծովային կազմակերպության (IMO, ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություն) գլխավոր քարտուղար Արսենիո Դոմինգեսը:

Խոսելով Հորմուզի նեղուցում տիրող իրավիճակի մասին՝ նա այն անվանել է կրիտիկական, «հատկապես Պարսից ծոցում գտնվող գրեթե 2000 նավերի վրա գտնվող 20,000 անձնակազմի անդամների համար, որոնց միջով նրանք չեն կարող անցնել»:

«Սա մտահոգիչ է, քանի որ իրավիճակի ձգձգման հետ մեկտեղ անհրաժեշտ կլինի սննդի, ջրի եւ վառելիքի չափաբաժիններ սահմանել», - նշել է ՄԾՕ ղեկավարը El Paؤs-ին տված հարցազրույցում:

«Տարածաշրջանի երկրները ծովագնացներին տրամադրում են ամեն հնարավոր օգնություն, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում՝ բժշկական օգնություն»:

ԱԶԱՐՈՎԸ ԲԱՑԱՏՐԵԼ Է

Ուկրաինայի նախկին վարչապետ Նիկոլայ Ազարովը հայտարարել է, որ արեւմտյան երկրները կշարունակեն ֆինանսական աջակցություն տրամադրել Կիեւին՝ ամսական 5-6 միլիարդ եվրոյի չափով: Նրա խոսքերը փոխանցում է ՏԱՍՍ-ը՝ընդգծելով, որ, ըստ Ազարովի, նման գումարները Արեւմուտքի համար մեծ դժվարություն չեն ներկայացնում:

Նախկին վարչապետի խոսքով՝ արեւմտյան երկրները տարբեր մեխանիզմներով կգտնեն անհրաժեշտ միջոցները՝ կանխելու Ուկրաինայի ֆինանսական ճգնաժամը: Նա նաեւ նշել է, որ Եվրոպան շահագրգռված է պահպանել երկրի կայունությունը եւ չի թույլ տա նրա արագ ֆինանսական փլուզումը

Միաժամանակ Ազարովը հավելել է, որ եվրոպական երկրներում արդեն նկատվում են տարաձայնություններ Ուկրաինայի ներկայիս իշխանությունների աջակցման հարցում: Նրա գնահատմամբ՝ ոչ բոլոր քաղաքական գործիչներն են պատրաստ անվերապահորեն աջակցել նախագահ Վլադիմիր Զելենսկուն:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԿԱԼԱՆՔԻ ՀԱՐՑԸ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿԱԼԱՆՔԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ

Հակակոռուպցիոն դատարանում ապրիլի 17-ին պետք է որոշվեր «Ուժեղ Հայաստան» կուսակցության առաջնորդ Սամվել Կարապետյանի կալանքի հարցը:

Սամվել Կարապետյանը «աբսուրդային» է որակել մեղադրանքը՝նշելով՝«բայց դատախազին բացարկ չեմ հայտնում»:

Ավելի վաղ ArmLur.am-ը հայտնել էր, որ տասը ամիս տեւած քննությունից հետո ապրիլի 15-ին մեկնարկել է Սամվել Կարապետյանի դատավարությունը՝ մի քանի հոդվածներով՝ հանցավոր ծագում ունեցող միջոցների օրինականացումից մինչեւ իշխանությունը զավթելուն ուղղված հրապարակային կոչեր:

Առաջին նիստին ընդառաջ՝Կարապետյանների փաստաբանները միջնորդություն էին ներկայացրել դատարան, որպեսզի դատավորը առաջնահերթ քննի Սամվել Կարապետյանին տնային կալանքից ազատելու հարցը:

Փաստաբան Արամ Վարդեւանյանը նախօրեին հայտարարել էր. «Ապրիլի 21-ին «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը հրավիրել է համագումար եւ կարեւոր է, որ մինչ այդ համագումարը Սամվել Կարապետյանը հնարավորություն ունենա ամբողջությամբ մասնակցելու քաղաքական գործընթացին: Մրցակցության, հավասարության եւ ընտրական գործընթացի երաշխիքների տեսանկյունից՝ սա ակնհայտ անհրաժեշտություն է, հույս ունենք, որ դա կապահովվի, եւ ցավ ենք ապրում, որ այդ բեռը ընկել է դատական իշխանության ուսերին»: Փաստաբանը հիշեցրել է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արդեն ընդունում է քաղաքական ուժերի հայտերը, կազմում է ցուցակները, եւ այդ գործընթացը կշարունակվի մինչեւ ապրիլի 23-ը:

Արդյունքում՝ երեկ դատավոր Վահե Դոլմազյանը որոշում կայացրեց բավարարել դատախազի միջնորդությունը եւ Սամվել Կարապետյանի կալանքը երկարաձգել 3 ամսով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ

Ապրիլի 8-ին Համայնքային ոստիկանության Մուշի բաժնի ծառայողները ստացել են տեղեկություն, որ տղամարդ ու կին «Սուզուկի» մակնիշի մեքենայով շրջում եւ Գյումրիի տարբեր վայրերում տեղադրում են թմրամիջոցով փաթեթներ: Հետագա միջոցառումներով համայնքային ոստիկանները մեքենան հայտնաբերում են Գյումրիի «Մայր Հայաստան» հուշահամալիրի հետնամասում, եւ նկատում, որ տղամարդն ու կինն իջնում են մեքենայից, ուսումնասիրում տարածքը, բջջային հեռախոսով նկարում ու կրկին նստում մեքենան: Ապրիլի 8-ին՝ժամը 16-ին, համայնքային ոստիկանները ձերբակալում են Կոտայքի մարզի Արագյուղի բնակիչ 26-ամյա տղամարդուն եւ Արարատի մարզի Նոր Խարբերդի բնակիչ 24-ամյա կնոջն ու մեքենայով հանդերձ տեղափոխում բաժին: Ավտոմեքենան պահպանվող հատուկ տարածքում կնիքվել է: Շիրակի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ: Քննչական գործողության ընթացքում 26-ամյա տղամարդը հուշահամալիրի հետնամասի տարբեր հատվածներից ներկայացրել է արդեն տեղադրված չորս փաթեթ եւ հայտնել, որ դրանց մեջ մարիխուանա է, որը ձեռք են բերել տելեգրամյան կայքէջի միջոցով՝ իրացնելու նպատակով: Դատարանի որոշմամբ «-Սուզուկի» մակնիշի մեքենայում կատարված խուզարկությամբ հայտնաբերվել է կարմիր ու դեղին գույնի 21 փաթեթ: Ըստ 26-ամյա տղամարդու՝ դրանցում նույնպես մարիխուանա է, որոնք պետք է տեղադրեին Գյումրիի տարբեր տարածքներում: 26-ամյա տղամարդն ու 24-ամյա կինը կալանավորվել են:

ԿԱՄԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄՆԵՐ

Ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ բնակչության կողմից շարունակվում են ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնումները: Ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման հերթական դեպքն է գրանցվել Էրեբունու բաժնի համայնքային ոստիկանների բացատրական աշխատանքի արդյունքում: Ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնել էր, որ զենք-զինամթերք է թողնում Վարդաշենի փողոցից գերեզմանատուն տանող ճանապարհին: Համայնքային ոստիկանները նշված վայրում հայտնաբերել են «ԱԿՍ» տիպի ինքնաձիգ, որսորդական երկու հրացան, «Ֆ-1» տիպի երկու նռնակ՝պայթուցիչներով, տարբեր տրամաչափի 391 փամփուշտ եւ որսորդական հրացանի մասեր: Զենք-զինամթերքի կամավոր հանձնման դեպք է գրանցվել նաեւ Համայնքային ոստիկանության Նոր Նորքի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի արդյունքում: Ոստիկանություն զանգահարած քաղաքացու նշած վայրում՝ Մառի փողոցում գտնվող կիսաքանդ շինության տարածքում, համայնքային ոստիկանները հայտնաբերել են «ԱԿՄ» տիպի ինքնաձիգ, հակատանկային նռնակ, «Ֆ-1» տիպի նռնակ, նռնակի եւ տրոտիլ տեսակի պայթուցիչներ, տարբեր տրամաչափի 176 փամփուշտ: ՆԳՆ ոստիկանությունը հորդորում է ապօրինի զենք-զինամթերքը կամավոր հանձնել ոստիկանություն՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՆՑԱՆՔՆԵՐԻՍ ՀԱՄԱՐ ԵՐԵԽԱՍ ՄԱՀԱՑԱՎ

Լեւոն Աթաբեկյանը բանտում է հայտնվել գողության համար: 11 տարեկանում առաջին անգամ գողություն է կատարել:

Մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2023 թվականի հոկտեմբերի 02-ին՝ ժամը 04:30-ի սահմաններում, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, քննությամբ չպարզված առարկայի գործադրմամբ վնասելով՝ բացել է գույքի պահպանության եւ պաշտպանության համար նախատեսված՝Երեւան քաղաքի Թումանյան 16 հասցեում գործող «Պիցցանինի» սննդի կետի մուտքի դուռը եւ ապօրինի մուտք գործելով սննդի կետի սրահ՝վերցրել է դրամարկղում եղած 98.000 ՀՀ դրամ գումարը, ինչպես նաեւ դրամարկղի սեղանի ներքեւի հատվածում դրված սեւ գույնի մետաղական չիրկիզվող պահարանը՝դրա մեջ եղած 90.000 ՀՀ դրամ գումարով հանդերձ, եւ նույն դռնից դուրս գալով՝ հեռացել է սննդի կետից՝ այդ կերպ հափշտակելով «Պիցցանինի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող մանր չափերով՝ ընդհանուր 188.000 ՀՀ դրամ կանխիկ գումարը:

«Ես դատախազներից, դատավորից չեմ վախենում, ես Աստծուց եմ վախենում: Իմ կատարած հանցանքների համար 3 ամսական երեխաս մահացավ»:

Ք. Մ.

ՀԱՅՏՆԻ Է ՆԻՍՏԻ ՕՐԸ

Ապրիլի 27-ին Բարձրագույն դատական խորհրդում կլսվի Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մեխակ Գեւորգյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Արդարադատության նախարարի այս տարվա հունվարի 14-ի թիվ 06-Ա որոշմամբ հարուցվել է կարգապահական վարույթ: Արդարադատության նախարարը մարտի 16-ին միջնորդություն է ներկայացրել ԲԴԽ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Խորհրդի նիստը նախ նշանակվել էր ապրիլի 13-ին, ապա 27-ին: Այս նույն օրը նշանակվել է Արարատի եւ Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբինա Աթոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշման եզրափակիչ մասի հրապարակումը: Միջնորդությունը ներկայացրել է արդարադատության նախարարը: Նախարարի հունվարի 7-ի 01-Ա որոշմամբ հարուցվել է կարգապահական վարույթ: Ապա նախարարը դիմել է ԲԴԽ: Այս գործով հայտնի է, որ պատասխանատվության ենթարկելու հիմքում դրվել է երեխայի որդեգրման մասին դատավորի որոշումը, առանց եզրակացության, իրավական հիմնավորվածության: Որդեգրման դիմում ներկայացրած անձը հաշվառված չի եղել, իսկ երեխան ներառված չի եղել որդեգրման ենթակա երեխաների ցուցակում: Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախկին դատավոր Ռուբինա Աթոյանը ԲԴԽ-63-Ո-139 որոշմամբ ներկայացված առաջարկությամբ՝ Հայաստանի Հանրապետության նախագահի 2019 թ. սեպտեմբերի 18-ի հրամանագրով նշանակվել է ՀՀ Արարատի եւ Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր:

ՀՈՐԴՈՐ

Մայր Աթոռը հայտնում է. «ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության պետի ապօրինի որոշմամբ արգելվել է Հայոց Եկեղեցու կողմից նշանակված եկեղեցականների մուտքը ազատազրկման վայրեր: ՔԿՀ պետը փաստացի դադարեցրել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու քրեակատարողական հիմնարկների հոգեւոր ծառայությունը, միեւնույն ժամանակ, շրջանցելով Մայր Աթոռը եւ անտեսելով իրավական կարգավորումները, անհատ եկեղեցականների հետ կնքել է աշխատանքային պայմանագրեր: Այս քայլը իշխանությունների հերթական թիրախավորված ու հակաեկեղեցական արշավն է՝ սահմանափակելու օրենսդրությամբ երաշխավորված Հայոց Եկեղեցու հոգեխնամ առաքելությունը հանրային կյանքում, ինչը դրսեւորվել է նաեւ ՀՀ Ձինված ուժերում եւ կրթական ոլորտում: «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածով ամրագրված է ազատազրկման վայրերում Հայոց Եկեղեցու հոգեխնամ գործունեություն ծավալելու առաքելությունը, իսկ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածը Քրեակատարողական հիմնարկներում Հայ Եկեղեցու հոգեխնամ առաքելությունը համարում է որպես ազգային Եկեղեցու մենաշնորհ եւ օրենքի ուժով երաշխավորում է պետության կողմից այդ գործունեությանը չխոչընդոտելու պարտականությունը: Տարիներ շարունակ քրեակատարողական հիմնարկներում իրականացվող հոգեւոր ծառայությունը եղել է Հայոց Եկեղեցու կարեւոր առաքելությունը՝ միտված ազատազրկված անձանց հոգեւոր խնամքին, ապաշխարությամբ նրանց վերափոխմանը եւ հասարակություն արժանապատիվ վերադարձին...»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

● *Ապրիլի 16-ից 17-ը բացահայտվել է 109 հանցագործություն, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

7 ՆԻՍՏ ՀԵՏԱԶԳՎԵԼ Է

Իջեւանի բնակիչ, 1981թ.-ին ծնված, բարձրագույն կրթությամբ, ամուսնալուծված, խնամքին մեկ անչափահաս ունեցող Նարա Ղազումյանը մեղադրվում է նրանում, որ 2006-2009թթ. ընթացքում աշխատելով «Ապավեն համայնքներին» բարեգործական հիմնադրամում որպես մարզային կազմակերպչի օգնական, ապա կազմակերպիչ, ուրիշի գույքը խարդախությամբ հափշտակելու դիտավորությամբ Արա Սիմոնյանի, Ստելլա Դավիդյանի եւ Ջեմմա Ֆրանգուլյանի օժանդակությամբ, չարաշահելով մի շարք քաղաքացիների վստահությունը, վերջիններիս՝ նշված գործունեությունը դադարեցված բարեգործական հիմնադրամում բարձր վարձատրվող տարբեր աշխատանքների ընդունելու, թանկարժեք ավտոմեքենաներ եւ բնակարաններ հատկացնելու, շինություն վարձակալելու պատրվակով, խաբեությամբ, հափշտակել է առանձնապես խոշոր չափի գումարներ: Ն. Ղազումյանին մեղադրանք է առաջադրվել 2003 թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով («Խարդախությունը, որը կատարվել է խոշոր չափերով»)՝ 5 դրվագով եւ 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով («Խարդախությունը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով»)՝ 7 դրվագով, Ա.Սիմոնյանին՝ 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ 4 դրվագով, Ջ. Ֆրանգուլյանին՝ 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ 2 դրվագով եւ Ս. Դավիդյանին՝ 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ 4 դրվագով: Ըստ մեղադրանքի՝Ն. Ղազումյանը ներկայանալով իբրեւ «Ապավեն համայնքներին» բարեգործական հիմնադրամի ղեկավար պաշտոնյա, իր ազգական Հակոբ Խոսրովյանին հայտնելով Արարատի մարզում գյուղատնտեսության ոլորտում , հիմնադրամի կողմից իբր նախաձեռնվող մեծածավալ բարեգործական ծրագրի մասին, նրան առաջարկել է ներգրավվել հիմնադրամի աշխատանքներում, խոստացել է միջնորդել հիմնադրամի ղեկավարությանը նրան որպես Արարատի մարզի համակարգող, իսկ նրա ընտանիքի անդամներին տարբեր այլ պաշտոնների նշանակելու, ինչպես նրան «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենա տրամադրելու հարցում: Ն. Ղազումյանը հիշյալ պատրվակներով 2018թ. հոկտեմբերից մինչեւ 2019-ի փետրվարն ընկած ժամանակահատվածում Հ.Խոսրովյանից հափշտակել է 28 980 000 ՀՀ դրամին համարժեք 60 հազար դոլար: Սույն գործով դատավարությունը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանում մեկնարկել է 2020թ. օգոստոսի 11-ին: 2023թ. հունիսի 6-ին դատավոր Դ. Սարգսյանը որոշել է քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխել, գործն ուղարկել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան: 2020թ. հունիսի 20-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ս. Մխիթարյանը որոշել է քրեական գործն ընդունել դատարանի վարույթ: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում այս քրեական գործով 2026թ.-ին նշանակված դատական 7 նիստերը տարբեր պատճառներով հետաձգվել են, հաջորդ նիստը նշանակվածէ մայիսի 26-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

ԲԱՐՁՐ Է ԳՆԱՀԱՏԵԼ ՊԱԿԻՍՏԱՆԻ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԴԵՐԸ

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը գովեստի խոսքեր է հնչեցրել Պակիստանի դերի վերաբերյալ՝ նշելով, որ Իսլամաբադը կարեւոր միջնորդական դեր է խաղացել ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ բանակցությունների ու հրադադարի հաստատման գործընթացում:

Թեհրանում կայացած հանդիպման ժամանակ, որտեղ ներկա էր Պակիստանի բանակի գլխավոր շտաբի պետ ֆելդմարշալ Ասիմ Մունիրը, Փեզեշքիանը ընդգծել է Պակիստանի վարչապետ Շեհբազ Շարիֆի եւ ռազմական ղեկավարության ներդրումը միջնորդական գործընթացում՝ հավելելով, որ Իրանն արժեւորում է այս աջակցությունը:

Նա հայտարարել է, որ Իրանը տարածաշրջանում ձգտում է կայուն խաղաղության եւ անվտանգությանը՝ միաժամանակ պնդելով իր ժողովրդի իրավունքների պաշտպանությունը միջազգային իրավունքի շրջանակում:

Փեզեշքիանը նշել է, որ տարածաշրջանում անկայունության հիմնական պատճառներից մեկը, ըստ Թեհրանի, Իսրայելի գործողություններն են, որոնք նպատակ ունեն խորացնել բաժանումները իսլամական երկրների միջեւ: Նրա խոսքով՝ իսլամական երկրների միասնությունը կարող է կանխել հետագա լարվածությունները եւ պատերազմները:

Իրանի նախագահը նաեւ քննադատել է ԱՄՆ-ի եւ Իսրայելի գործողությունները՝ դրանք որակելով որպես ագրեսիա, եւ ընդգծել է, որ Իրանը չի ձգտում տարածաշրջանային անկայունության, այլ կողմ է հարեւանների հետ բարեկամական հարաբերությունների զարգացմանը:

Իր հերթին Պակիստանի բանակի ղեկավար Ասիմ Մունիրը հայտնել է, որ իրավիճակի զարգացումները ցույց են տալիս՝ տարածաշրջանը պատերազմից հետո այլեւս չի վերադառնա նախկին վիճակին՝ ընդգծելով համագործակցության եւ վերականգնման անհրաժեշտությունը:

Նա նաեւ նշել է, որ տարածաշրջանային համագործակցությունը, հատկապես ճգնաժամերի ընթացքում, կարեւոր դեր ունի երկրների միջեւ վստահության ձեւավորման համար՝ ընդգծելով Իրանի եւ Պակիստանի պատմական ու մշակութային կապերը:

Հանդիպման ընթացքում կողմերը համաձայնել են, որ տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատման համար անհրաժեշտ է շարունակել դիվանագիտական ջանքերը եւ համագործակցությունը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՎԱՅԻՆ ԱՊԱԳԱ

Դեպի արդար, թափանցիկ եւ թվային ապագա. հարկային ու մաքսային վարչարարության արմատական բարեփոխումների նոր փուլում, ինչպես նաեւ Հարկ վճարողի օրվա նախաշեմին՝ ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանը հանդիպել է խոշոր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչների հետ: Այդ մասին հայտնում են ՊԵԿ-ից: Ողջունելով հանդիպման մասնակիցներին՝ ՊԵԿ նախագահը կարեւորել է տնտեսվարողների հետ գործընկերային հարաբերությունների ձեւավորման եւ ամրապնդման անհրաժեշտությունը. «Մեզ համար առաջնային է հարկ վճարողների հետ ձեւավորել նոր որակի հարաբերություն՝ հիմնված վստահության, բաց երկխոսության, մարդակենտրոն մոտեցման եւ կամավոր կարգապահության վրա: Այս սկզբունքներն են դրված ՊԵԿ առաքելության եւ տեսլականի հիմքում. մեր նպատակն է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ օրինապահությունը դառնում է գիտակցված ընտրություն՝ արժեք ստեղծելով թե՛ իրենց, թե՛ պետության համար»: ՊԵԿ նախագահի խոսքով՝ այս ուղղությամբ առանցքային դեր ունեն թվայնացումը, վերլուծական գործիքների զարգացումը եւ արհեստական բանականության կիրառումը: Փոփոխությունները նպաստում են արդար մրցակցության ձեւավորմանը, բարձրացնում են վստահությունը եւ միտված են հանրային բարեկեցության աճին: Կոմիտեի ղեկավարը կարեւոր ձեռքբերում է համարել նաեւ այն, որ 2017 թվականից ի վեր հարկային եկամուտներն աճել են շուրջ 2.4 անգամ. «Մեր համատեղ ստեղծված արդյունքի (ՀՆԱ-ի) մոտ 24 տոկոսը հարկերի տեսքով վերադառնում է պետական բյուջե՝ ուղղվելով հանրային կարեւոր ծրագրերի եւ նախաձեռնությունների իրականացմանը, որոնք այլ պայմաններում հնարավոր չէին լինի»:

Հանդիպման ընթացքում կարեւորվել է բիզնեսի հետ բաց եւ շարունակական հաղորդակցությունը, որը հնարավորություն է տալիս ոչ միայն բարձրաձայնել խնդիրները, այլեւ համատեղ գտնել դրանց լուծումները՝ նոր գաղափարների եւ գործնական նախաձեռնությունների միջոցով: «Վստահ եմ՝ միասին շարունակելու ենք զարգացնել հարկ վճարելու մշակույթը, որը գնալով ամրապնդվում է՝ մարդկանց կողմից իրենց վճարած հարկերի արդյունքը տեսնելու շնորհիվ»,- ասել է Էդուարդ Հակոբյանը:

Հանդիպման ընթացքում ներկայացվել են նաեւ հարկային եւ մաքսային վարչարարության բարեփոխումների ընթացքը եւ նոր նախաձեռնությունները, ինչպես նաեւ զարգացման հեռանկարները: Հանդիպումն անցկացվել է բաց եւ կառուցողական մթնոլորտում՝ հարցուպատասխան ձեւաչափով: Կողմերը վերահաստատել են պատրաստակամությունը շարունակելու համագործակցությունը եւ նման ձեւաչափով հանդիպումները:

ԳՐԱՌՈՒՄ

«Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահ, ՀՀ հատուկ հանձնարարություններով նախկին դեսպան Էդմոն Մարուքյանի տելեգրամյան գրառումը. «Ինքնիշխան լինելը ենթադրում է ամբիցիաներ ունենալ եւ փորձել բավարարել դրանք: Ինչո՞ւ պետք է ԱՄՆ-Իրան բանակցությունները անցկացվեն Իսլամաբադում, այլ ոչ թե Երեւանում, երբ Հայաստանը խաղաղության խորհրդի անդամ է, իսկ իշխանական քարոզչության համաձայն՝ «Փաշինյանը Թրամփի հետ լավ է»: Բոլորի համար ակնհայտ էր, որ մինչեւ հրադադարի կնքումը Միացյալ Նահանգները երկխոսության եզրեր էին փնտրում, բայց ՀՀ իշխանությունները անտարբեր գտնվեցին: Այնինչ ամեն օր կրկնում են, թե իբր տարածաշրջանում «խաղաղության խաչմերուկ» են կառուցում, բայց երբ այդ խաչմերուկը «այրում է», ոչ մի քայլ չեն ձեռնարկում իրավիճակը շտկելու համար: Այն ֆոնին, երբ խոսվում է մեր երկրի «եվրաինտեգրման» մասին, որպես Իրանի հարեւան եւ բարեկամ պետություն, ինչո՞ւ Հայաստանը բանակցային հարթակ տրամադրելու առաջարկով հանդես չեկավ: Ինքնիշխանությունն այդպես է դրսեւորվում՝ երբ պետությունն ամբիցիաներ ունի եւ փորձում է դրանք բավարարել, ոչ թե սպասում է, թե Ալիեւը եւ Էրդողանը ինչ նոր պահանջներ կներկայացնեն՝ դրանք արագացված կարգով կյանքի կոչելու համար:

● *Անցած 1 օրում գրանցվել է 9 ավտովթար. 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵԾ ՈՒԺ Է ՆԵՐԾՆՉՈՒՄ



«Ամեն ինչ արել եմ, որպեսզի լավ մարզավիճակով մոտենամ Եվրոպայի առաջնությանը: Գնում եմ միայն մեկ նպատակի՝ Եվրոպայի չեմպիոն դառնալու համար: Մնացած տարբերակների մասին փորձում եմ չմտածել, որովհետեւ պետք է ձգտել առավելագույնին»: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց Եվրոպայի չեմպիոն, աշխարհի բրոնզե մեդալակիր, աշխարհի անհատական գավաթի խաղարկության հաղթող Վազգեն Թեւանյանը:

Ազատ ոճի ըմբշամարտի 65 կգ քաշային կարգում Հայաստանի հավաքականի առաջատարը թիմակիցների հետ վերջին մարզումներն է անցկացնում Ալբանիա մեկնելուց առաջ, որտեղ անցկացվելու է Եվրոպայի առաջնությունը:

«Եվրոպայի առաջնությունից առաջ լավ աշխատել ենք: Սա արդեն 5-րդ հավաքն է: Վրաստանում ենք հավաք ունեցել, որի ընթացքում տարբեր երկրների ներկայացուցիչների հետ գոտեմարտել ենք, փորձով փոխանակվել:

Այս պահին լավ մարզավիճակում եմ գտնվում: Ամեն ինչ արել եմ, որպեսզի լավ մարզավիճակով մոտենամ Եվրոպայի առաջնությանը: Գնում եմ միայն մեկ նպատակի՝ Եվրոպայի չեմպիոն դառնալու համար: Մնացած տարբերակների մասին փորձում եմ չմտածել, որովհետեւ պետք է ձգտել առավելագույնին: Անցած տարի Եվրոպայի բրոնզե մեդալակիր դարձա: Այդ բրոնզից հետո շատ մեծ աշխատանք եմ կատարել: 2025-ի աշխարհի առաջնությանը նույնպես լավ հանդես չեկա: Այս պատճառով այս տարի շատ մեծ ուժով, ծանրաբեռնվածությամբ եւ լարվածությամբ եմ սկսել տարին: Թե աշխատանքս ինչ արդյունք կտա, մրցագորգը ցույց կտա»,- ասաց Վազգեն Թեւանյանը:

Նշենք, որ 26-ամյա ըմբիշը վերջերս է հայր դարձել: Նրա խոսքով, դստեր ծնունդը նոր նպատակների եւ հաղթանակների ուժ է ներշնչում:

«Կյանքում հայր դառնալն ավելացնում է պատասխանատվությունը: Այլ է, երբ զույգի կյանք է, մեկ այլ բան է, երբ երեխա է ծնվում, որն ավելի է մոտեցնում ընտանիքի մոդելին: Փորձում եմ ավելի լավ ամուսին եւ հայր լինել: Ինչ վերաբերում է սպորտին, դստերս ծնունդն ավելի մեծ ուժ է ներշնչում, որպեսզի ավելի մեծ հաջողությունների հասնեմ»,- նշեց Վազգեն Թեւանյանը:

ՍՈՎՈՐԻՐ, ԽԱՂԱ՛ ԵՎ ՀԱՂԹԻ՛Ր

Գ

ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

17-ը ապրիլի, 2026թ., Երեւան. Սովորի՛ր, խաղա՛ եւ հաղթի՛ր. Team Telecom Armenia-ն եւ Koreez համահայկական կրթական ծրագիրը նախաձեռնել են նոր համագործակցություն՝ միավորելով ուժերը դպրոցականների կրթության զարգացման նպատակով: Team Telecom Armenia-ի բաժանորդները այսուհետ կարող են հեշտությամբ օգտվել Koreez կրթական հավելվածից՝ անմիջապես My Team հավելվածի միջոցով:



Koreez հավելվածը ժամանակակից կրթական հարթակ է, որտեղ աշակերտները կարող են յուրացնել ամբողջ դպրոցական ծրագիրը եւ գիտելիքներով մրցել ընկերների հետ: Հավելվածի բովանդակությունը հիմնված է Հայաստանի պետական հանրակրթական ծրագրի վրա եւ հնարավորություն է տալիս աշակերտներին սովորել խաղային ձեւաչափով, հավաքել միավորներ եւ բարձրանալ առաջատարների աղյուսակում:

«Այսօր երեխաները բավականաչափ ժամանակ են անցկացնում թվային միջավայրում, եւ Team-ը կարեւորում է այդ ժամանակի որակյալ եւ արդյունավետ օգտագործումը: Koreez-ի հետ համագործակցությամբ մենք առաջարկում ենք լուծում, որը համադրում է ժամանցն ու ուսուցումը՝ ապահովելով անվտանգ եւ օգտակար միջավայր երեխաների զարգացման համար»,-նշում է Team Telecom Armenia-ի կոմերցիոն տնօրեն Տիգրան Ֆրանգյանը:

«Այսօր երեխաների ուշադրության, հետաքրքրությունների եւ ընկալումների ձեւավորման գլխավոր միջավայրերից մեկը թվային աշխարհն է: Koreez-ում մենք կատարելագործում ենք այդ մոտեցումը՝ կրթությունը վերածելով խաղի, ինչի շնորհիվ սովորելը դառնում է հետաքրքիր, մրցակցային եւ մոտիվացնող գործընթաց: Team Telecom Armenia-ի հետ այս համագործակցությունը մեզ հնարավորություն է տալիս պարզ եւ ժամանակակից, բայց միեւնույն ժամանակ որակյալ կրթությունը առավել հասանելի դարձնել հազարավոր աշակերտներին: Koreez-ը պարզապես հավելված չէ. այն կրթական շարժում է, որը փոխում է երեխաների վերաբերմունքը սովորելու նկատմամբ, ինչի շնորհիվ էլ ձեւավորվում է իրենց ապագան՝ գիտելիքը դարձնելով ամենամեծ ուժը»,-նշում է Koreez կրթական ծրագրի հիմնադիր Սուրեն Ալոյանը:

Team Telecom Armenia-ի բաժանորդները կարող են հեշտությամբ ակտիվացնել ծառայությունը անմիջապես իրենց բջջային հաշվեկշռից՝ առանց բանկային քարտի անհրաժեշտության:

Ծառայությանը հնարավոր է միանալ նաեւ My Team հավելվածի «Խաղեր» բաժնում, որտեղ ներկայացված են բաժանորդագրության տարբերակներն ու ակտիվացման քայլերը: Բաժանորդագրությունը հասանելի է ինչպես կանխավճարային, այնպես էլ հետվճարային բաժանորդներին:

Նոր ծառայության ներդրմամբ Team Telecom Armenia-ն ընդլայնում է կրթական թվային ծառայությունների հասանելիությունը՝ առաջարկելով ժամանակակից եւ հասանելի լուծումներ, որոնք միավորում են տեխնոլոգիան, ուսուցումն ու օգտատիրոջ հարմարավետությունը:

Team Telecom Armenia-ի մասին

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում ընկերությունն աջակցում է տեխնոլոգիական, կրթական ու գիտական, ինչպես նաեւ բնապահպանական նախագծերի իրագործմանը, նպաստում հայկական բովանդակության ստեղծմանն ու տարածմանը, մարզերի զարգացմանը ու թիմային ոգին խրախուսող մարզաձեւերի ու նախաձեռնությունների իրականացմանը:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱՁԱՅՆԵԼ Է ՀԱՆՁՆԵԼ «ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՓՈՇԻՆ»

Նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Իրանը համաձայնել է 2025 թվականի ամռանը Իրանի միջուկային օբյեկտների վրա ԱՄՆ-ի ավիահարվածներից մնացած «միջուկային փոշին» հանձնել: Նրա խոսքերը մեջբերել է The Washington Post-ը:

«Իրանը միջուկային զենք չունի, եւ նրանք համաձայնել են դրան: Իրանը համաձայնել է դրան, եւ նրանք շատ վճռականորեն համաձայնել են: Նրանք համաձայնել են մեզ վերադարձնել միջուկային փոշին, որը խորը գետնի տակ է B-2 ռմբակոծիչներով մեր կողմից իրականացված հարձակումից», - լրագրողներին ասել է Թրամփը:

Իրանական կողմը դեռեւս չի հաստատել, որ զիջումների է գնացել ԱՄՆ-ի եւ Պակիստանի բանակցողների հետ հանդիպումների ժամանակ: The Washington Post-ը նշում է, որ ԱՄՆ-ի նախորդ հայտարարությունները Իրանի միջուկային պարտավորությունների վերաբերյալ անճշտություններ կամ անհիմն են եղել:

ՄՈՏ 50 ԿԻՆ ԿՄԱՀԱՆԱ

ՄԱԿ-ի կանանց գենդերային հավասարության գործակալության խոսնակ Սոֆիա Քալթորփի խոսքով՝ 2023 թվականի հոկտեմբերից մինչեւ 2025 թվականի դեկտեմբերը Գազայի հատվածում ամեն օր մահանում էր մոտ 50 կին եւ աղջիկ:

«2023 թվականի հոկտեմբերից մինչեւ 2025 թվականի դեկտեմբերը Իսրայելի օդային ռմբակոծությունների եւ ցամաքային ռազմական գործողությունների հետեւանքով Գազայի հատվածում սպանվել է ավելի քան 38,000 կին եւ աղջիկ», - ասել է նա Ժնեւում կայացած ճեպազրույցի ժամանակ: «Սա ներառում է ավելի քան 22,000 կին եւ 16,000 աղջիկ, ինչը միջինում կազմում է ամեն օր սպանվող առնվազն 47 կին եւ աղջիկ»:

Քալթորփի խոսքով՝ մահացածների թվում կանանց եւ աղջիկների համամասնությունը «շատ ավելի բարձր է, քան Գազայում նախորդ հակամարտություններում»: Նա նշել է, որ պաղեստինյան անկլավում կանանց տառապանքները շարունակվում են:

«Չնայած 2025 թվականի հոկտեմբերին հայտարարված հրադադարին, ըստ առկա տվյալների՝ վերջին վեց ամիսների ընթացքում զոհվել է ավելի քան 730 մարդ, իսկ վիրավորվել՝ ավելի քան 2000-ը», - բացատրել է նա՝ նշելով, որ զոհերի սեռի վերաբերյալ կոնկրետ տվյալներ ներկայումս անհնար է տրամադրել տվյալների բացակայության պատճառով:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

HERMES

ՄԻԼԻԱՐԴՆԵՐ Է ԿՈՐՑՆՈՒՄ

Ֆրանսիական Hermes նորաձեւության տան բաժնետոմսերը կտրուկ անկում են ապրել՝ կորցնելով գրեթե 12.75%՝ 2026 թվականի առաջին եռամսյակում վաճառքի աճի դանդաղման ֆոնին: WWD-ն հաղորդում է, որ անկումը պայմանավորված էր արժույթի տատանումներով, զբոսաշրջության թուլացմամբ եւ Մերձավոր Արեւելքի հիմնական շուկաներում պահանջարկի անկմամբ:



Որտեղ է ապրանքանիշը դեռեւս աճում

Չնայած շքեղության հատվածի ամենաուժեղ ապրանքանիշերից մեկի կարգավիճակը պահպանելուն, Hermes-ը հայտնել է սպասվածից ավելի դանդաղ աճի մասին. մարտի 31-ին ավարտված վաճառքը երեք ամիսների ընթացքում աճել է 6%-ով՝ հաստատուն փոխարժեքով, սակայն ընկերության ֆինանսական արդյունքները ցույց են տվել 1% անկում՝ մոտ 290 միլիոն եվրոյի բացասական արժույթային ազդեցության պատճառով:

Գլխավոր տնօրեն Ակսել Դյուման նշել է, որ ապրանքանիշը շարունակում է հետապնդել ստեղծագործականության, արտադրանքի որակի եւ հաճախորդների հավատարմության վրա հիմնված երկարաժամկետ ռազմավարություն: Նա հավելել է, որ բիզնեսի հիմունքները մնում են ուժեղ նույնիսկ աշխարհաքաղաքական անկայունության պայմաններում:

Որտեղ Hermes-ը կորցրեց աճը

Զբոսաշրջության շուկաները եւ աշխարհաքաղաքական անկայունություն ապրող տարածաշրջանները ամենամեծ ճնշումն են գործադրել դրա կատարողականի վրա.

Ֆրանսիայում վաճառքը նվազել է 3%-ով՝ զբոսաշրջային հոսքի անկման ֆոնին:

Մերձավոր Արեւելքում վաճառքը նվազել է 6%-ով՝ ԱՄԷ-ում, Քուվեյթում, Կատարում եւ Բահրեյնում վաճառքի վրա ազդած հակամարտության պատճառով:

Անմաքս առեւտրի եւ օդանավակայանների մանրածախ վաճառքը նվազել է:

Անկումը հատկապես նկատելի էր ճանապարհորդական մանրածախ առեւտրի հատվածում, որտեղ հաճախորդների ակտիվությունը օդանավակայաններում եւ կետերում նվազել է:

Որտեղ է ապրանքանիշը դեռեւս աճում

Չնայած որոշ տարածաշրջաններում անկմանը, ընկերությունը ցույց է տվել ուժեղ աճ մի շարք հիմնական շուկաներում.

ԱՄՆ, Կանադա եւ Հարավային Ամերիկա՝ +17.2%

Ճապոնիա՝ +9.6%

Եվրոպա (բացառությամբ Ֆրանսիայի)՝ +9.7%

Ասիա (բացառությամբ Ճապոնիայի)՝ +2.2%

Չինաստանում ընկերությունը գրանցել է «միջին աճ», մինչդեռ Հարավային Կորեան ցույց է տվել կայուն աճ:

Ինչն է փրկում ապրանքանիշը

Կաշվե իրերը մնում են աճի հիմնական շարժիչ ուժը՝ աճելով 9%-ով՝ շնորհիվ նոր պայուսակների մոդելների պահանջարկի, այդ թվում՝ Faubourg Express-ի եւ Collier d'Attelage-ի, ինչպես նաեւ Herbag շարքի ժողովրդականության:

Հագուստի եւ աքսեսուարների հատվածները մնացել են անփոփոխ՝ սպասելով նոր հավաքածուների եւ տղամարդկանց հագուստի գծի համար 2027 թվականին թարմացված ստեղծագործական ուղղության:

Օծանելիքի եւ կոսմետիկայի ոլորտները լճացան, մինչդեռ զարդերի եւ տնային ապրանքների ոլորտը աճեց 6.8%-ով՝ շնորհիվ միջազգային ցուցահանդեսների եւ նոր հավաքածուների:

Ինչու՞ բաժնետոմսերը կտրուկ անկում ապրեցին

Չնայած թվերը վերլուծաբանների սպասումներից մի փոքր ցածր էին, շուկան կտրուկ արձագանքեց. բաժնետոմսերը առեւտրի առաջին ժամվա ընթացքում ընկան ավելի քան 12%-ով:

Վերլուծաբանները նշում են, որ նույնիսկ ուժեղ բիզնես մոդելի դեպքում Hermes-ը մնում է խոցելի շքեղության պահանջարկի համաշխարհային դանդաղման նկատմամբ, հատկապես աշխարհաքաղաքական անկայունության եւ զբոսաշրջության անկման պայմաններում:

Hermes-ը մնում է շքեղության հատվածի ամենաուժեղ խաղացողներից մեկը, բայց նույնիսկ «հանգիստ շքեղությունը» չի կարող անխոցելի լինել համաշխարհային տնտեսական եւ քաղաքական ցնցումներից: Աճը դանդաղում է, եւ ներդրողները ավելի ու ավելի են արձագանքում պահանջարկի թուլացման ցանկացած նշանի՝նույնիսկ ամենաթանկ ապրանքանիշերի դեպքում:

ՄԱՐՏԱԿԱՆ Է ՏՐԱՄԱԴՐՎԱԾ

Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հավաքականն ապրիլի 20-26-ը Տիրանայում կայանալիք Եվրոպայի առաջնության նախապատրաստական վերջին փուլն անցկացնում է Երեւանում:

ԵԱ-ում հանդես են գալու Մանվել Խնձրցյանը (57 կգ), Արսեն Հարությունյանը (61 կգ), Վազգեն Թեւանյանը (65 կգ), Դավիթ Մարգարյանը (70 կգ), Նարեկ Հարությունյանը (74 կգ), Հրայր Ալիխանյանը (79 կգ), Մուշեղ Մկրտչյանը (92 կգ) եւ Խաչատուր Խաչատրյանը (125 կգ):

Լրագրողների հետ զրույցում Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Հաբեթնակ Կուրղինյանը նշել է, որ մարզիկները լավ են պատրաստ ու ԵԱ-ից առաջ մարտական վիճակում են: Միայն Արման Անդրեասյանը չի կարողանա մասնակցել առաջնությանը:

«Տղաներից լավ գոտեմարտեր եմ սպասում, ինձ թվում է, որ կկարողանան իրենց հնարավորությունները լիարժեք կերպով ցույց տալ: Լավ պատրաստվածություն ենք անցել ու մի քանի երկրների ընտրանիների հետ միջազգային հավաք ունեցել Վրաստանում: Թիմը լավ մարզավիճակում է, մի շարք միջազգային մրցաշարերի ենք մասնակցել, հաղթող ու մրցանակակիրներ դարձել»,- շեշտել է նա:

Կուրղինյանն առաջին հերթին մեդալներ է ակնկալում թիմի առաջատարներ Հարությունյանից ու Թեւանյանից, որոնք արդեն Եվրոպայի չեմպիոններ են դարձել: Հարությունյանը կփորձի 5-րդ անգամ ոսկե մեդալ նվաճել: «Մյուս տղաները հիմնականում երիտասարդ են, բայց նրանք եւս կփորձեն մեդալներով վերադառնալ: Այլ լավ տղաներ էլ ունենք, որոնք Մ-23 տարեկանների մրցաշարերում են մեդալներ նվաճել, բայց նրանց ժամանակ է պետք, որ հաստատվեն մեծահասակների թիմում»,- ավելացրել է մարզիչը:

ԼՈՒՐԵՐ

ԱՎԵԼԱՑՐԵԼ Է ՆՈՐ ՄՈԴԵԼ

Քիմ Քարդաշյանի եւ Քանյե Ուեսթի դուստրը TikTok-ում ցուցադրել է գրիլզի նոր զույգ՝ իր ատամների զարդերի արդեն տպավորիչ հավաքածուին ավելացնելով 14 կարատանոց ոսկեգույն մոդել: Նոր աքսեսուարը պատրաստված է սպիտակ ոսկուց եւ ստեղծվել է Gabby Elan Jewelry-ի կողմից: Ըստ լրատվամիջոցների հաղորդագրությունների, հավաքածուն ծածկում է ատամների վերին եւ ստորին շարքերը՝ ընդհանուր առմամբ 20 հատ: Տեսանյութում Նորթը շրթունքները սինխրոնացնում է երաժշտության հետ, լայն ժպտում եւ ցուցադրում փայլուն գրիլզը: Նա նախկինում սոցիալական ցանցերում հայտնվել էր այլ տարբերակներով, այդ թվում՝ նույն հավաքածուի վառ կապույտ եւ կարմիր գրիլզներով: Ոսկերիչը նաեւ Instagram-ում ցուցադրել է անհատական տարբերակներ՝ դասական ոսկեգույնից բացի, ներկայացված էին նաեւ մետաղական կարմիր եւ փիրուզագույն գույները: Նորթի կերպարը լրացվել էր հաստ աքսեսուարներով՝ մի քանի սրածայր ապարանջաններով եւ հայազգի ոսկերիչ Ալեքս Մոսի մեծ գանգի շղթայով, որը զարդարված էր ավելի քան 106 կարատ ադամանդներով՝ մոր նվերը: Եւ սա դեռ ամենը չէ: Նա նախկինում ցուցադրել էր Johnny Dang & Co.-ի սուր ատամներով, ադամանդներով զարդարված շնաձկան պատկերով գրիլները, ինչպես նաեւ գոթական սեւ տարբերակը, որը բուռն քննարկումներ էր առաջացրել համացանցում:

«ԳԱՀԵՐԻ ԽԱՂԸ» ԳԱԼԻՍ Է ՄԵԾ ԷԿՐԱՆ

«Գահերի խաղը» ֆրանշիզը պաշտոնապես կստանա կինոադապտացիա: Լաս Վեգասում կայացած CinemaCon-ի շնորհանդեսի ժամանակ Warner Bros.-ը հաստատել է «Game of Thrones: Aegon's Conquest» աշխատանքային վերնագրով լիամետրաժ ֆիլմի մշակումը, հաղորդում է Hypebeast-ը: Նախագիծը ներկայացվել է որպես ստուդիայի 2027 թվականի եւ հետագա ֆիլմերի ծրագրի մաս, որը փաստացի նշանավորում է Վեստերոսի տիեզերքի զարգացման նոր փուլ: Ֆիլմի սյուժեն հիմնված է Ջորջ Ռ.Ռ. Մարտինի ստեղծագործությունների, մասնավորապես՝ «Կրակ եւ արյուն» պատմական վեպի վրա: Պատմությունը կենտրոնանում է լեգենդար նվաճող Էգոն I Թարգարիենի վրա, որը իր քույրերի եւ կանանց՝Վիսենյայի եւ Ռեյնիսի հետ միասին միավորում է Վեստերոսի յոթ թագավորությունները: Մի շարք նվաճողական պատերազմներից հետո, հենց Էգոնն է ստեղծում Երկաթե Գահը՝հալեցնելով իր պարտված թշնամիների սրերը, այդպիսով հիմք դնելով միասնական թագավորության: Սցենարը կգրի Բո Ուիլիմոնը, որը հայտնի է «Քարտերի տուն» սերիալի եւ «Աստղային պատերազմներ» տիեզերքի «Անդորր» նախագծի վրա իր աշխատանքներով: Նրա մասնակցությունը հուշում է, որ ֆիլմը կենտրոնացած է ոչ միայն խոշորամասշտաբ մարտերի, այլեւ քաղաքական ինտրիգների եւ իշխանության համար պայքարի վրա: Չնայած դերասանական կազմը դեռեւս չի հայտարարվել, նախագիծն արդեն գովազդվում է որպես ֆրանշիզայի պատմության ամենաամբիցիոզներից մեկը:

● *Մեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնում ապրիլի 19-ին՝ժամը 12:00-ին, կկայանա «Մոխրոտիկը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Մշակութային արժեքների փորձագիտական գնահատման ի՞նչ կարգ է գործում Հայաստանի Հանրապետությունում:

Արշակ Գալստյան, 25 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների եւ մշակութային նշանակության առարկաների արվեստաբանական ու մշակութաբանական փորձաքննությունն իրականացնում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Փորձաքննության շահառուներ են հանդիսանում ՀՀ եւ օտարերկրյա քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, այդ թվում՝ ՀՀ պետական մարմինները: Փորձաքննությունն իրականացվում է ներկայացված դիմումի կամ հանձնարարության հիման վրա: Ֆիզիկական անձանց դեպքում, գործընթացի սկիզբ է համարվում վերջիններիս կողմից կենտրոնի հայտագրման բաժին դիմում ներկայացնելը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գրության հրամանի, հանձնարարության, որոշման եւ փորձաքննության ենթակա իրի կամ իրերի եւ դրանց լուսանկարների տրամադրումը: Փորձաքննության առավելագույն ժամկետ է համարվում 15 օրը՝ բացառությամբ կողմերի համաձայնությամբ որոշակի ժամկետով երկարաձգելու դեպքերի: Կենտրոնը փորձաքննությունն իրականացնում է 28 ոլորտներում: Փորձաքննության արդյունքում հայտատուին տրամադրվում է համապատասխան փորձագիտական եզրակացություն:

ԿԳՄՄ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փորձաքննության դիմաց հայտատուն կատարում է վճարներ՝ «Մշակութային արժեքների արվեստաբանական եւ մշակութաբանական փորձաքննության, ինչպես նաեւ իրականացվող այլ ծառայությունների վճարների գանձման մասին» կարգին համապատասխան:

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս եւ ո՞ր լեզվով է իրականացվում ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումն ու ուսուցումը հասատությունում:

Մարինե Սիմոնյան, 55 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու ազատելու կարգի» 5-րդ կետի համաձայն՝ «Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումը հաստատություն կարող է կատարվել սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը): Եթե ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած են, եւ տվյալ բնակավայրում բացակայում է այլ հաստատությունում ազգային (մայրենի) լեզվով ուսուցման հնարավորությունը, ապա սովորողի ընդունելությունը տվյալ հաստատություն իրականացվում է՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից»:

ԿԳՄՄ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի



Երեւանում Tesla-ն Էրեբունի-Աթոյան փողոցների խաչմերուկում կոտրել է երթեւեկությունը կարգավորող լուսակիրը եւ հայտնվել երկաթե սյան մոտ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 - 5 + 9 + 13
	Կոտայքի լեռներ	0 - 4 +10 + 13
	Կոտայքի նախալեռներ	+ 3 + 5 +11 + 14
	Գեղարքունիք	0 - 3 + 9 + 13
	Լոռի	- 2 + 3 + 11 + 15
	Տավուշ	0 + 3 + 12 + 15
	Արագածոտնի լեռներ	- 1 - 5 + 8 + 11
	Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 5 +11 + 16

	Արարատ	+ 2 + 5 +15 + 18
	Արմավիր	+ 3 + 6 +17 + 19
	Վայոց ձորի լեռներ	- 3 - 6 + 7 + 11
	Վայոց ձորի նախալեռներ	+ 4 + 7 +16 + 20
	Սյունիքի լեռներ	- 3 - 6 + 8 + 12
	Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +14 + 17
	Սյունիքի հովիտներ	+ 5 + 9 +20 + 24
	Երեւան	+ 5 + 7 +16 +18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*